

ասան՝ միանգամայն երկար զրեցին և խորհրդածեցին նորա ընտանեկան և ընկերական, քաղաքական և կրօնական վարուց և բարուց և գործոց վրայ: Բազմապիս ընթերցող հասարակութիւնն արդէն զանազան անգամ առիթ ունեցեր է Հանգիտիս անցելոյն մէջ՝ կարդալու Գլխատգնի վարքը և կամ զրուստիքը, ուստի կրկնաբան շինելու համար՝ զանց կ'ընենք Հինը վերանորոգել: Բայց սակայն հնազոյն՝ այլ մինչև օրս դեռ եւս

ծածկուած՝ սեփական յիշատակ մը վեհ ծերունոյն, իբրև համառօտ՝ սակայն ընդարձակասու զամբանական ճառ մը՝ իւր ըզձեց և գործոց հոշակիչ, իբրև սիրայուչ պսակ մի շիրմի՝ քաղելով վանքիս յիշատակագրոց էջերէն, տխրազգած և զգայուն սրտով կը մտնեամք ի սնարս զամբանին, իւր ծանօթ սրտով և իսկական ձեռքով գրուած հետեւեալ խօսքերը՝ վանքիս հիւրընկալ սեմոց այցելութեան մ'առթիւ. և միանգամայն կը հծծմբ

*My dear Sir,*

*With all good wishes  
for the prosperity of Armenia  
and Armenians*

*October 2. 1879*

*Catherine Gladstone*

այս խօսքերս. «Ո՛վ վեհ քաղաքացի ընդհանուր մարդկութեան, մեծամեծ ազգաց հետ նաև այն փոքրիկ ազգն, որուն բարբառստութեան փափաքող եզրք բանիւ և արդեամբք, երախտազետ զգացմամբ զըռշմած է արդէն անմահ անուոց ժամանակիս պատմութեան տխուր էջերուն մէջ՝ բսկեղէն բուսացոյ տատերով \* և:»

ՓՐԵՆԵՐԻԿ ՄԻԻԼԼԷՐ

Քերթսւնսնսնսն տխուր կափարիչը ծածկեց աշխարհիս երեսն՝ ընդուպիտական հետազօտութեանց մէջ՝ ներկայ զարուս ուսանորդող աստղերէն մին. մեռաւ Փրեդերիկ Միլլէր, և իւր մահուան գոյժը տխրեցուց ընդհանրապէս ամէն բանասիրական մտքեր, մասնատրտապէս հայերենագիտութեան պարապողները, և ի միջի այլոց նաև յատկապէս Միսիմարեան միաբանութիւնս,

\* Գլխատգնի մահուանէն քիչ օր յետոյ, երկու աղետական անգղիացի օրիորդ քոյրք: Ի և Քի. Timothee սըբ ամսով յառաջ եկած էին ի տեսութիւն վանացոյ, խաւրցին թանգարանի՝ իրենց անմուսնալի Աղգակցին գեղեցեկ շուգապի պատկեր մի, ի հանդ. յիշատակ:

որուն միշտ բարեացակամ՝ և պնիւ յարգող ցուցեր էր ինքզինքը՝ իւր յարաբերութեանց մէջ :

Փրեզերիկ Միւլլը գերմանացի ընտանեաց սերունդ էր, բայց Բուհեմիոյ մէջ ծնած : Միտեանդեամբ յունական լեզուի ուսման տալով ինքզինքը՝ Հերման Բուիցի տաղանդութեան ներքեւ, մի և նոյն ժամանակ տալորեցաւ նաեւ սանսկրիտ և բակտրիական (զննդ) լեզուները, Անտոն Բոյլիբի առաջնորդութեամբ, և այս առած սկզբնաւորութեամբ յառաջ ընթանալով՝ քառասուն տարի անընդհատ աշխատեցաւ՝ ամէն ժամանակի և ամէն ազգի լեզուաց ձայնագիրութեան և ձեւաբանութեան հետազոտութեանց վրայ :

Մինք աւելի յարմարագոյն դրուատող մի չենք գտներ այս մեծ բանասիրին արժէից՝ քան ինչ որ գրած է նորա մահուան առթիւ, երբեմն նորա արժանաւոր աշակերտակից և այժմ ալ նոյն ճիւղի ուսմանց պարապող մեր ազնիւ և զիտուն բարեկամն Էմիլիոյ Տէլզա, հետեւեալ խաղերնէ թարգմանուած տողերով. «Փ. Միւլլը, կ'ըսէ, հեղինակաց գրութեան ոճն և վայելչաբանութիւնն աւելի՛ ուշ կը գնէր նոցա խօսքերուն կամ բաներուն գորութեան, զորս իւր քանդակող սուր մտքնիւով կը կտկէր կը զըտէր. ազգաց և կամ արուեստից պատմութիւնն աւելի՛ կը քննէր մարդկութեան քննական ընթացքը, կը հետազօտէր խոհեմութեամբ նորա արգասիքները, զանոնք բացայայտ կարգի վրայ կ'ատնուէր, և ասանց բարձրագոյն թոփններու մէջ ինքզինքը կորսնցընելու՝ ուղղակի իւր գիտած վախճանին կը դիմէր » :

« Հաստատուն և զարմանալի յիշողութիւն մը միշտ դաշնակից էր նորա ողջամիտ դատողութեանց հետ : Աւելի հետաւոր իրաց՝ քան թէ մտասկայից կը զարձնէր իւր մտադրութիւնը՝ թէ՛ տեղեաց և թէ՛ ժամանակի վերաբերութեամբ, որով պրովէնտիալէն (գաւառաբանութիւնն) տառաց և աւելի եթովպերէնն ուսաւ, սերբերնէն աւելի մայրական լեզուն. մանաւանդ թէ կրնանք ըսել՝ որ նորագոյն լեզուաց Համար Համակրանք չէր տածեր, և ոչ զուցէ Եպիտոսի երգերուն յու նարէնը Մոփոկի լեզուին չափ հետաքրքրու-

թեան առիթ ընծայեց իրեն, և կամ Վանեցոց խօսածը՝ Խորենացոյ գրածին հասար. և զեռ աւելի զարմանալի է՝ երբ դեռ տենք, որ Բուհեմացոց մտապրելոյն հանդերձ՝ անոնց լեզուին և մատենագրութեան այնքան հմտութիւն չունէր :

« Իւր սիրելագոյն պարապմունքն զատ, որ էր լեզուաց սկզբնական բաղակազմութեան և տարալուծութեան ուսումն, և որոյ մէջ գերագոյն վարժապետ հանդիսացաւ, կը սնանէր նաեւ իմաստասիրութեամբ, և ապիւնագեան դրութիւնն իրեն գրուածոց ոյժ և իմաստ կը հարողորդէ :

« Հայտնական լեզուի ուսումն՝ թէ՛ իւր ներքին յատկութիւններով և թէ՛ իրանական լեզուաց տուճին հետ ունեցած աղընչութեամբք՝ շուտով նորա յօժարակամ ուշադրութիւնը գրուեց. Երբայ որ գաղանապաշ քօղեր տեսներ՝ այնչափ ալ իւր եռանդը կը վառուր գանոնք մէկդի առնելու, օգնելով ընդհանուր բանասիրական հետազօտութեանց : Երբեք իրեն զեղեւումն կամ ցաւ չէր պատճառեր՝ մէկ մը կտրած անցած ճամբէն դարձեալ ետ դառնալ, և իւր խակութեան հասակի երկունքը՝ հաստնացեալ կենաց պտուղներով կատարելագործել. և այս ջանքն ալ մինչև իւր կենաց վերջն ընկերեց իրեն, այնպէս որ նոր տառից ձայնագրութեան վրագոյց բրած վերջին առաջարկութիւններն՝ հագիւ թէ այժմ տարւոյ մը շրջանը՝ կը բուրբեն » :

Այս ներհուն խորհրդածութեանց վրայ ուրիշ բան չի մնար մեզ աւելցընելիք, բայց եթէ գոփոխ և որտի հանութեամբ յիշեցընել, որ Միւլլիբի գրուածներն օգտուեցան մեծապէս այժմեան մերազգի բանասիրաց ոչ սակաւք, և յատկապէս մեր Վիէննաքնակ Միխիթարեան եղբարց երիտասարդագոյն գիտնականները :

Ազգային բանասիրաց անշուշտ օշինջուակ հետաքրքրական կրնայ լինել Փր. Միւլլըի հետ լեզուի վրայ գրած գլխաւոր գործոց հետեւեալ ցուցակն, որ քաղուած է՝ հրատարակութեան կարգաւ՝ Վիէննական ակադեմիային գործոց հաւաքածուէն :

1864. — Երկու ճառք լեզուաբանական հայկական բերականութեան խնդրոց վրայօք :

Ա. բայածանցներու վրայ. Բ. Թուական ա-  
ծանցներու վրայ:

1862-63. — Յաւելուած Հետազոտու-  
թեանց հայկական ձայնարանութեան վրա-  
յօք. երեք տետրակ:

1863. — Յաւելուած Հետազոտութեանց  
հայերէն բայերու վրայ:

1864. — Յաւելուած Հետազոտութեանց  
հայկական անուանց (գոյականաց) վրայ:

1865. — Հայերէն ածանցներու վրայ (ի  
Հանդիսի Բէնֆէյի Արեւելք և Արեւմուտք.  
Գ. 34):

1865. — Հայկական գրութեան սկզբնա-  
ւորութեան վրայ:

1865. — Հայկականք. Ա. — 1. Ածանցք.  
— 2. Ստուգաբանութիւն Աստուած, կոչք,  
առիւծ, ճռակ բառերու:

1870. — Հայկականք. Բ. — 1. Անկա-  
տարք բայերու. — 2. Ստուգաբանութիւն ա-  
ղտոս, օր, ինձ, տէր, սիրամարգ, վար-  
դայեւտ, ոռնի բառից:

1871. — Հայկականք. Գ. — 1. Հայ-  
կական բառից վերջաւորութեանց օրէնքներն  
ու շեշտերը. — 2. Ստուգաբանութիւն բազ-  
մաթիւ բառերու:

1874. — Հայկականք. Գ. — 1. Բայերու  
երկրորդ դէմի և վերջաւորութեան վրայ. —  
2. Գործիական հոլովի ք տառին վրայ. —  
3. Ստուգաբանութիւնք բառից:

1878. — Հայկականք. Ե. — 1. Բայից  
սահմ. կատարեալի և ստորագասականին ց  
տառին վրայ. — 2. ս. շ. շ. տառից վրայ.  
— 3. Ստուգաբանութիւնք բառից:

1877. — Հայերէն լեզուի դիրքը հնդկա-  
գերմանական լեզուաց շրջանին մէջ:


1890. — Հայ բառից ստուգաբանութիւնք  
(69 բառք):

Ատոնց հետ յիշենք նաեւ իւր եռահատոր  
գլխատը գործն Մխաթի լեզուաբանական գի-  
տութեան (1876-87):

Փք. Միւլլերի կենաց և գրուածոց վրայ  
մանրամասն և ընդարձակագոյն տեղեկու-  
թիւններ ինչորոշ ազգային բանասիրաց ցոյց  
կու տամք՝ Հ. Գաբրիէն Չարբանայեան վ՛.  
Ոչստամասիրութեանց հայ լեզուի և մատե-  
նագրութեան յարեւմտոս (Ժ՛-ԺԺ գար)

Հմտայից գրուածն (կը 295-305). տպագր.  
1895, ի Վենետիկ.

\*\*\*



Վ Ա Ս Ր Ք Ն Կ Ա Ս Ր Ք Ն

Ե Ա

Յ Ո Ւ Ե Լ Ե Ա Ե Հ Ա Ե Գ Է Ս Բ Ի Լ Ի Զ Պ Ո Ւ Ա

**Ա** Հ Ա տարւոյս գեղեցկագոյն ամօղն մէջ  
(մայիս 15-30) Լուսիտանիոյ մայրաքաղա-  
քում, Հնդկաստանի ծովային ճանապարհի  
գիւտին չորհարբարամեկի առթիւ՝ կատարուե-  
ցան մեծամեծ հանդէսներ, որոց համառօտ  
նկարագրի հետ, ըստ ինչորոշ ազնիւ բարե-  
կամի՝ մը, պարտք կը համարիմ յօրինել աստ  
նաեւ այդ հանդիսից գիւցազնի՝ հուկականան  
վառջոյ Կամայի կենսագրականը, որ պատ-  
մութեան մէջ կը փայլի այն կենդանի լոյ-  
սերու նման՝ որը յամախ փայլակեղծ երկինց  
սպիտակաթուխ ամպերու սակէն, յուշիկ յուշիկ  
կ'անհետանան կը կորսուին ի մթութեան :  
Ծնած է նա 1469ին տաեանները, Սիլնէս կու-  
չուած փոքրիկ ծովեզերեայ քաղաքի մէջ,  
Լիզպոնայի հարսակողմը, 24 փարօտի հե-  
ռու : Աղնուական սոսմի մը զաւակ լինելով՝  
ի մանկութենէ վարժեցաւ նոյն ժամանակի  
յասուկ արքայական և զիտական կրթու-  
թեամբք : Երանցամով Լուսիտանիոս այդ զարու  
մէջ ունեցաւ ոչ սակաւ մեծանուն և հայրե-  
նեաց օգտակար զասկուռք և Հնդեռաստանե-  
բորդ զարու մէջ հանճարեղ և քաջասիրտ ան-  
ձինք՝ ծովային ճամբորդութիւններ ընելով, նոր  
նոր երկիրներ զանայլ իրենց մեծ պարծանք  
կը համարէին և հիմնովին կ'աւուճասիրէին

1. Յովակիմ Արաբիոյ տնօռանէ բանաստեղծ  
և մատենագիր Լուսիտանայի, անդամ Լիզպո-  
նայի Թաղաւարական ճեմարանին :